ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ
БЮЛЛЕТЕНЬ

№ 08/1

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում
զետեղված տեղեկությունները
համարվում են հրապարակված 2019 թվականի օգոստոսի 1-ից

Երևան ■ 2019 ■ Ереван

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՏԵՐ 4, 101
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին 6, 103

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ 8
Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին 10

Տեղեկություններ հանրահայտ ճանաչված ապրանքային նշանների մասին 93

Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին 94

ՑՈՒՑԻՉՆԵՐ 95

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 97

ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ 105

Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից 1995թ.

Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 3
Հեռ. (011) 597-534 հայտերի ընդունման բաժին
Հեռ. (011) 597-535 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной собственности с 1995г.

Ереван, 0010, Площадь Республики, Правительственный дом, 3
Тел. (374 11) 597-534 отдел приема заявок
Тел. (374 11) 597-535 отдел информационно-технологического обеспечения

Internet: www.aipa.am
E-mail: armpat@aipa.am

СОДЕРЖАНИЕ

ИЗОБРЕТЕНИЯ.....4, 101
Сведения о выданных патентах.....6, 103

ТОВАРНЫЕ ЗНАКИ.....8
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания.....10

Сведения об общеизвестных товарных знаков 93

Сведения о продлении действия регистрации товарных знаков.....94

УКАЗАТЕЛИ.....95

СООБЩЕНИЯ.....97

ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....105

CONTENTS

INVENTIONS.....4, 101
Information on granted patents.....6, 103

TRADE MARKS.....8
Information on registered trade marks and service marks.....10

Information on well-knoun trade marks.....93

Information on renewal of effect of trademark registration.....94

INDEXES.....95

REPORTS.....97

TWO-LETTER CODES.....105

ԳՅՈՒՏԵՐ

Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

11	*արտոնագրի համարը*
13	*փաստաթղթի տեսակի կոդը*
	A գյուտի արտոնագիր
	B արտոնագրաունակության մասին եզրակացություն
21	*հայտի համարը*
22	*հայտի ներկայացման թվականը*
23	*ցուցահանդեսային առաջնության թվականը*
31	*առաջին հայտի համարը*
32	*առաջին հայտի ներկայացման թվականը*
33	*երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը*
45	*գյուտի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
51	*միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)*
54	*գյուտի անվանումը*
56	*տեղեկատվության աղբյուրներ*
57	*գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը*
62	*ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը*
72	*գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը*
73	*արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը*
74	*արտոնագրային հավատարմատար*
85	*միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը*
86	*միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը*
87	*միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը*

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) **2019.01** (11) **3316** (13) **A**
A23F 3/00
(21) **AM20190052** (22) **30.04.2019**
(72) Ստեփանյան Կարեն (AM)
(73) Ստեփանյան Կարեն (AM)
(54) **Խոտաբուսային թեյ**
(57) Գյուտը վերաբերում է սննդի արդյունաբերությանը, մասնավորապես՝ խոտաբուսային թեյերին:

Թեյը ներառում է ուրցի տերևներ, երիցուկի ծաղիկներ, վարդի թերթիկներ, անանուխի տերևներ, մեղրախոտի տերևներ, սրոհունդի տերևներ և ծաղիկներ, բաղադրամասերի հետևյալ հարաբերակցությամբ (զանգվ. %). ուրցի տերևներ՝ 18.3-19.5, երիցուկի ծաղիկներ՝ 10.1-11.1, վարդի թերթիկներ՝ 1.8-2.0, մեղրախոտի տերևներ 15.0-16.0, անանուխի տերևներ՝ 43.0-44.0, սրոհունդի տերևներ և ծաղիկներ՝10.1-11.1:

Բարելավվում են թեյի համային, բուժիչ և կազդուրիչ հատկությունները:
(74) Հասմիկ Քեռյան

---

(51) **2019.01** (11) **3317** (13) **A**
C02F 1/00
(21) **AM20190050** (22) **26.04.2019**
(72) Արտաշես Թադևոսյան (AM), Արմինե Սաֆարյան (AM), Ալլա Մանուկյան (AM)
(73) Արտաշես Թադևոսյան, 0062, Երևան, Նոր Նորքի 2-րդ զանգված 58, բն. 28 (AM), Արմինե Սաֆարյան, 0034, ք. Երևան, Սվաճյան 22 շ., բն. 22 (AM), Ալլա Մանուկյան, 0039, ք. Երևան, Չեխովի 34, բն. 37 (AM)
(54) **Պղնձի և մոլիբդենի իոններ պարունակող հոսքաջրերի մաքրման եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է հանքարդյունաբերական ոլորտի հոսքաջրերի մաքրման եղանակներին, մասնավորապես՝ պղնձի և մոլիբդենի իոններ պարունակող հոսքաջրերի մաքրման եղանակին:

Հոսքաջուրը մշակում են մաքրող միջոցով, ապա ֆիլտրում: Որպես մաքրող միջոց օգտագործում են բենտոնիտ, մշակումը կատարում են 5-30°C ջերմաստիճանում 10-20 րոպեի ընթացքում՝ ռեակցիոն խառնուրդը պղպջակավորելով 1,5-2 մ/վ արագությամբ տրվող օդով, հոսքաջրի և բենտոնիտի զանգվածային 1:(0,05-0,1) հարաբերակցությամբ:

Բարձրացվում է հոսքաջրերի մաքրման աստիճանը:

---

(51) **2019.01** (11) **3318** (13) **A**
C12G 1/00
(21) **AM20190036** (22) **18.03.2019**
(72) Վահագն Գևորգյան (AM)
(73) Վահագն Գևորգյան, 0033, Երևան, Ավետիսյան 80 շենք, բն. 56 (AM)
(54) **Գինու ստացման եղանակ (տարբերակներ)**
(57) Գյուտը վերաբերում է սննդի արդյունաբերությանը, մասնավորապես՝ կախանի եղանակով չամչացված խաղողից հնացված գինետեսակների պատրաստման եղանակներին:

Պատրաստված են երեք տեսակի գինիներ:

1. «Դասական կախանի» գինին, որի արտադրության համար իրականացնում են խաղողի չամչացում, չանչազատում, թրմեցում, առաջնային և երկրորդային խմորումներ, փոխլցում և հնացում:

2. «Կես-Կախանի» գինին, որի ստացման համար խաղողը բաժանում են երկու մասի, որից առաջին մասի համար օգտագործում են գինու արտադրության սպիրտային խմորման դասական եղանակը, իսկ երկրորդի համար՝ «Դասական կախանի» գինու արտադրության եղանակը, որից հետո երկու հնարքներով ստացված գինիները խառնելով իրար, իրականացնում են գինու արտադրության հետագա գործընթացները:

3. «Քաղցր Կախանի» գինին, որի ստացման համար իրականացնում են չամչացված խաղողի զանգվածի սառը թրմեցում, խմորում, ինքնահոս գինենյութի անմիջապես անջատում, փոխլցում, հնացում կաղնե տակառների կամ շշերի մեջ:

---

(51) **2019.01** (11) **3319** (13) **A**
C22B 34/00
C22C 33/00
(21) **AM20190044** (22) **09.04.2019**
(72) Վիլենա Մարտիրոսյան (AM), Մարինե Սասունցյան (AM), Նինա Սահակյան (AM), Էդգար Զաքարյան (AM)
(73) Վիլենա Մարտիրոսյան, 0019, Երևան, Ալիխանյան փող, 1-ին փակուղի, տուն 9 (AM), Մարինե Սասունցյան, 0019, Երևան, Բաղրամյան պողոտա 2, բն. 13 (AM), Նինա Սահակյան, 0044, Երևան, Դուրյան 29, բն. 12 (AM)
(54) **Ֆեռոմոլիբդենի ստացման եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է մետալուրգիայի բնագավառին, մասնավորապես՝ֆեռոմոլիբդենի ստացման եղանակին՝ բարձրջերմաստիճանային ինքնատարածվող սինթեզի (ԲԻՍ) եղանակով:

Մոլիբդենիտային խտանյութը մանրացնում են, ստացված մանրացված խտանյութում մոլիբդենի սուլֆիդը վերածում են մոլիբդենի (VI) օքսիդի, այնուհետև ստացված զանգվածին ավելացնում են երկաթի փոշի, ալյումինի փոշի և թրծած կիր: Մոլիբդենիտային խտանյութը մանրացնում են մինչև 10 մկմ չափի, իսկ մոլիբդենի սուլֆիդը վերածում են մոլիբդենի (VI) օքսիդի մեխանաքիմիական ակտիվացմամբ՝ ավելացնելով CaO:

Պարզեցվում է եղանակը:

---

(51) **2019.01** (11) **3320** (13) **A**
C22C 33/00
(21) **AM20190045** (22) **09.04.2019**
(72) Վիլենա Մարտիրոսյան (AM), Մարինե Սասունցյան (AM), Նինա Սահակյան (AM), Էդգար Զաքարյան (AM), Էրիկ Չոլախյան (AM)
(73) Վիլենա Մարտիրոսյան, 0019, Երևան, Ալիխանյան փող, 1-ին փակուղի, տուն 9 (AM), Մարինե Սասունցյան, 0019, Երևան, Բաղրամյան պողոտա 2, բն. 13 (AM), Նինա Սահակյան, 0044, Երևան, Դուրյան 29, բն. 12 (AM)
(54) **Բովախառնուրդ ֆեռոմոլիբդենի ստացման համար**
(57) Գյուտը վերաբերում է մետալուրգիայի բնագավառին, մասնավորապես՝ բովախառնուրդի բաղադրակազմին:

Բովախառնուրդը պարունակում է հետևյալ բաղադրամասերը (զանգվ. %). ալյումին՝ 16,0-20,0, երկաթի խարտվածք՝ 9,0-12,0, թրծված կիր՝ 14,0-17,0, նատրիումի նիտրատ /$NaNO_3$/՝ 3,0-6,0, կալցիումի ֆտորիդ /CaF_2/՝ 1,5-5,0, մեխանաակտիվացված մոլիբդենիտայ ին խտանյութ՝ մնացածը:

Ապահովվում է բովախառնուրդի կայուն բաղադրակազմ:

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

ТОВАРНЫЕ ЗНАКИ

Ապրանքային և սպասարկման նշաններին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.60 ստանդարտի

111	*գրանցման հերթական համարը*
151	*գրանցման թվականը (հանրահայտ ճանաչման թվականը)*
152	*թվականը, որից սկսած նշանը հանրահայտ է*
181	*գրանցման գործողության ենթադրյալ ավարտը*
210	*հայտի համարը*
220	*հայտի ներկայացման թվականը*
230	*ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը*
310	*առաջին հայտի համարը*
320	*կոնվենցիայով առաջնության թվականը*
330	*երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը*
442	*հայտի հրապարակման թվականը*
511	*ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը*
526	*չպահպանվող տարրեր*
540	*ապրանքային նշանը*
551	*կոլեկտիվ կամ հավաստագրային նշան*
554	*ծավալային նշան*
555	*հոլոգրաֆիական նշան*
556	*ձայնային նշան*
591	*գույնը և գունային համակցությունը*
646	*իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը և թվականը*
730	*նշանի իրավատերը, հասցեն, երկրի կոդը*
740	*արտոնագրային հավատարմատար*

Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին

(210) 20180694 **(111) 29188**
(220) 05.05.2018 **(151) 22.07.2019**
(181) 05.05.2028

(730) Վարդուհի Ավետիսյան, Երևան, Բուռնազյան փ., տուն 102, AM

(442) 16.05.2018

(540)

ԿՃՈՒՀ
KCHUCH
ԿՉՍՉ

(511)

դաս 43. տեղերի ամրագրմամբ (հյուրանոցներում, պանսիոններում) զբաղվող գործակալություններ, սննդամթերքի պատրաստում, առաքում, մատուցում և սեղանի ձևավորում (քեյթրինգ), ծերանոցների ծառայություններ, սրճարանների ծառայություններ, նախաճաշարանների ծառայություններ, քեմպինգների ծառայություններ, ճաշարանների ծառայություններ հիմնարկներում կամ ուսումնական հաստատություններում, ժամանակավոր բնակատեղերի վարձակալում, պանսիոնների ծառայություններ, զբոսաշրջիկների համար տների ծառայություններ, հյուրանոցների ծառայություններ, մանկամսուրների ծառայություններ, ռեստորանների ծառայություններ, տեղերի ամրագրում պանսիոններում, տեղերի ամրագրում հյուրանոցներում, ինքնասպասարկման ռեստորանների ծառայություններ, խորտկարանների ծառայություններ, պանսիոններ կենդանիների համար, բարերի ծառայություններ, հանգստի ճամբարների ծառայություններ (կացարանի տրամադրում), շարժական շինությունների վարձույթ, տեղերի ամրագրում ժամանակավոր բնակության համար, մոթելների ծառայություններ, կահույքի, սեղանի սպիտակեղենի և ամանեղենի վարձույթ, սենյակների, դահլիճների վարձակալում հավաքների համար, վրանների վարձույթ, խոհանոցային սարքերի վարձույթ, խմելու ջրի բաշխիչ սարքերի վարձույթ, լուսավորող սարքերի վարձույթ, մթերքից խոհարարական արձանիկների ստեղծում, ժամանակավոր բնակեցման համար ընդունարանների ծառայություններ (ժամանման և մեկնման կառավարում), վաշոկու ռեստորանների ծառայություններ, «ուդոն» և «սոբա» ռեստորանների ծառայություններ:

---

(210) 20181017 **(111) 29189**
(220) 22.06.2018 **(151) 22.07.2019**
(181) 22.06.2028

(730) Արմինե Եղիկյան, ք. Գյումրի, Տրդատ Ճարտարապետ 32, բն. 6, AM

(442) 16.08.2018

(540)



(591) Ապրանքային նշանը պահպանվում է վառ կարմիր գույնով:

(511)

դաս 35. դեղագործական, անասնաբուժական և հիգիենիկ պատրաստուկների և բժշկական պարագաների մանրածախ վաճառք.

դաս 44. կենդանիների խնամք. բժշկական կլինիկաների ծառայություններ:

---

(210) 20181173 **(111) 29190**
(220) 20.07.2018 **(151) 22.07.2019**
(181) 20.07.2028

(730) Անհատ ձեռնարկատեր Ջալիկ Մելիքսեթյան, Երևան, Չարենցի 70/10, AM

(442) 01.08.2018

(540)



(526) Բացի «KING» բառից մնացած բոլոր բառային տարրերն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:

(511)

դաս 35. ավտոպահեստամասերի վաճառք:

---

(210) 20181213 **(111) 29191**
(220) 31.07.2018 **(151) 22.07.2019**
(181) 31.07.2028

(730) Վիաքոմ Ինթերնեյշնլ Ինք., US

(442) 16.08.2018

(540)



(511)

դաս 9. ձայնի, պատկերի և տվյալների գրանցման և վերարտադրման սարքեր ձայնի և (կամ) պատկերների պահման, գրանցման, փոխանցման և վերարտադրման համար. համակարգչային ծրագրային արտադրանք. համակարգչային խաղեր. CD-ROM խաղեր. ձայնային արտածմամբ խաղեր. խաղային քարթրիջներ համակարգչային տեսախաղերի համար և տեսաարտածմամբ խաղային մեքենաների համար. համակարգչային խաղերի կասետներ. համակարգչային խաղերի ծրագրեր. համակարգչային խաղերի երիզներ. ձայնագրություններ և տեսագրություններ. ֆոնոգրաֆ գրանցումներ. կինեմատոգրաֆիական և լուսանկարչական ժապավեններ. կինոֆիլմերի ժապավեններ և տեսաերիզներ. MP3 նվագարկիչներ. թվային խցիկներ. շարժական հեռախոսներ և անլար շարժական հեռախոսների բոլոր տեսակի սարքավորումներ և աքսեսուարներ, ներառյալ շարժական հեռախոսների կորպուսներ. անլար շարժական հաղորդակցական միջոցների համար զանգերի մեղեդիներ, որոնք իրենցից ներկայացնում են ներբեռնվող զանգի մեղեդիներ, երաժշտություն, MP3 ֆայլեր, գրաֆիկաներ, խաղեր և տեսապատկերներ. հաղորդման և շարժական հաղորդակցական անլար սարքեր՝ անլար հաղորդակցական այլ սարքերի հետ ձայնային և տեքստային հաղորդագրությունների հաղորդման և ընդունման հնարավորությամբ. արևային ակնոցներ, ակնոցներ, ձայնային տվյալներ և(կամ) պատկերներ պարունակող մագնիսական տեղեկակիրներ. լազերային սկավառակներ. տեսասկավառակներ, խտասկավառակներ. CD-ROM-ներ. CD-I-ներ. DVD-ներ. երիզներ. տեսաերիզներ. քարթրիջներ, քարտեր կինոֆիլմերի, լրատվական, սպորտային և հեռուստատեսային հաղորդումների, փաստագրական ֆիլմերի, խաղային շոուների, անիմացիաների, համերգների և այլ ներկայացումների պարունակությամբ. հիշողության կրիչներ. ինտերակտիվ խտասկավառակներ և առանց վերագրանցման հնարավորության խտասկավառակներ (CD-ROM -ներ). երիզների և խտասկավառակների պատյաններ. համակարգիչների հետ օգտագործվող ինտերակտիվ էլեկտրոնային խաղեր. տեսախաղերի համար ծրագրային ապահովում. տեսախաղերի ծրագրեր. տեսախաղերի CD-ROM -ներ. տեսախաղերի DVD-ROM-ներ. համակարգչային խաղերի CD-ROM -ներ, համակարգչային խաղերի DVD-ROM-ներ. էլեկտրոնային խաղերի

ծրագրեր, էլեկտրոնային խաղերի CD-ROM-ներ, էլեկտրոնային խաղերի DVD-ROM-ներ. խաղային ծրագրեր պարունակող քարթրիջներ և կասետներ՝ ձեռքի տեսախաղերի սարքերի հետ օգտագործման համար. ներբեռնելի էլեկտրոնային խաղային ծրագրեր, ներբեռնելի համակարգչային խաղային ծրագրեր և ներբեռնելի տեսախաղերի ծրագրեր. ինտերակտիվ մուլտիմեդիային համակարգչային խաղեր. համակարգչային խաղային ծրագրեր. տեսախաղերի ծրագրեր. տեսախաղերի հետ օգտագործվող ներբեռնելի ծրագրային ապահովում. համակարգչային խաղերի հետ օգտագործվող ներբեռնելի ծրագրային ապահովում. հեռուստացույցի հետ օգտագործվող էլեկտրոնային խաղեր. ձեռքի էլեկտրոնային սարքերի հետ օգտագործվող տեսախաղեր. անլար էլեկտրոնային սարքերի հետ օգտագործվող տեսախաղեր.

դաս 16. տպագիր արտադրանք, այն է՝ նշումների համար թղթեր և ներդիր թերթիկներ, գեղարվեստական գրքերի հավաքածուներ, կոմիքսներ, այն է՝ կոմիքսների գրքույկներ, փոխադրանկարներ, բամպերների կպչուն պիտակներ, հավաքաքարտեր, գրառումների համար քարտեր, ազդագրեր, պլակատներ, թղթապանակներ, մատիտներ, գրիչներ, օրացույցներ.

դաս 18. հովանոցներ. մեծ պայուսակներ. թիկնապայուսակներ. գոտկատեղի պայուսակներ. սուրհանդակի պայուսակներ. կանացի պայուսակներ. դրամապանակներ և քսակներ. սպորտային պայուսակներ. պորտպլեդներ ճանապարհորդելու համար. ուսապայուսակներ. փոքր պայուսակներ դրամի պահման համար. իրատոպրակներ. ծովափի պայուսակներ.

դաս 21. սպասք, այն է՝ գավաթիկներ, գավաթներ, ըմպելիքների ամանեղեն, ափսեներ, տափաշշեր, տուփեր նախաճաշի համար, տուփեր թխվածքների համար, սկուտեղներ, մատուցարաններ և ջրի դատարկ վաճառվող շշեր.

դաս 25. լողազգեստներ. լոգանքի խալաթներ. լողափի զգեստներ. հագուստի գոտիներ. կիսատաբատներ. բաճկոններ (հագուստ). մանտո. վերարկուներ. կարճագուլպաներ. կոշիկներ. բանդանաներ. սվիտերներ. պուլովերներ. հելոուինի կոստյումներ. դիմակահանդեսի կոստյումներ. հերոսների կոստյումներ. բեմական կոստյումներ. շրջազգեստներ. ձեռնոցներ. մարմնամարզիկի կիսատաբատներ. ականջակալներ (հագուստ). վզին կապվող աքսեսուարներ. պիժամաներ. տաբատներ. շապիկներ (բլուզներ). բամբակյա վերնաշապիկներ. ֆուֆայկաներ. դահուկորդների հագուստ. լայն տաբատներ. արևապաշտպան հովարներ. տաբատակալներ. բարձր օձիքով սվիտերներ. ներքնազգեստ. բաճկոնակներ. մարզանքի կոստյումներ. գլխարկներ.

դաս 28. խաղեր և խաղալիքներ, այն է՝ քարտային խաղեր, խաղաքարտեր, տեգեր, տիկնիկներ. փչովի խաղալիքներ. փափուկ խաղալիքներ. գեղարվեստական հերոսների տեսքով խաղալիքներ և դրանց պարագաներ. CD-ROM-ներով ինքնավար ավտոմատներ տեսախաղերի համար. ինքնավար ավտոմատներ տեսախաղերի համար. ձայնային ելքով ինքնավար ավտոմատներ տեսախաղերի համար. սեղանի խաղեր. սպորտային պարագաներ, այն է՝ գոլֆի մականներ, բեյսբոլի գնդակներ, ֆուտբոլի գնդակներ, թենիսի ձեռնաթիակների գնդակներ, խաղային զարգացնող գնդակներ, անվավոր տախտակներ սահելու համար. բեյսբոլի զարկիչներ. զարդարանքներ Նոր տարվա տոնածառերի համար.

դաս 29. միս. ձուկ. թռչնամիս և որսամիս. մսի էքստրակտներ. պահածոյացված, չորացված և ջերմամշակման ենթարկված մրգեր և բանջարեղեն. դոնդող. մուրաբա. մրգային սոուսներ. ձու, կաթ և կաթնամթերք. սննդային յուղեր և ճարպեր. բուրավետացված և քաղցրացրած դոնդող.

դաս 30. հաց. հացի ձողիկներ. մաստակ. տորթի զարդարման կոնֆետներ. տորթի սննդային զարդարանքներ. տորթերի պատրաստման խառնուրդներ. տորթեր. հրուշակներ և շոկոլադային հիմքով լցոններ տորթերի ու կարկանդակների համար. կոնֆետներ. շաքարապատ ադիբուդի. կարամելապատ ադիբուդի. կարամելներ. հացահատիկի հիմքով նախուտեստներ. եգիպտացորենից փքված նախուտեստներ պանրի համով. փչովի ծամոն. շոկոլադային չիպսեր. եգիպտացորենի չիպսեր. ալյուրի հիմքով չիպսեր. շոկոլադ. շոկոլադապատ ընկույզներ. շոկոլադի փոշի. շոկոլադի օշարակներ. շոկոլադե զարդարանքներ

աղանդերի համար. կակաոյի խառնուրդներ. պաղպաղակի կոներ. թխվածքաբլիթներ. գալետներ. եղիպտացորենի ձողիկներ. պանրով կրեկերներ. կրեկերներ. ուտելու համար պատրաստի հացահատիկային ձողիկներ. ջնարակներ. մրգային կարկանդակներ. բուրավետացված և քաղցրացրած դոնդող. գրանոլայի հիմքով նախուտեստներ. տաք շոկոլադ. եգիպտացորենի ճաթած, փքված հատիկներ. ոլորաբլիթներ. պուդինգ (քաղցրակուտապ). վաֆլիներ. պաղպաղակ. ճարպի ցածր պարունակությամբ պաղպաղականման սառեցված աղանդեր. սառեցված բուրավետացված աղանդեր. սառեցված հրուշակեղեն. սառեցված յոգուրտ (սննդային սառույց). սառեցված եփած կրեմ.

դաս 41. զվարճությունների ծառայություններ. հեռուստազվարճությունների ծառայություններ. կինո-, տեսա- և թատերական զվարճությունների ծառայություններ. հեռուստածրագրերի, ֆիլմերի ու կինոֆիլմերի, անիմացիոն ֆիլմերի և ձայնա- ու տեսագրությունների արտադրություն, ներկայացում, ցուցադրում, տարածում, շնորհանդես, սինդիկացում (բաշխում կամ վաճառք մեկ կամ ավելի տեղական հեռուստաընկերությունների), ցանցի միջոցով տարածում և վար ձույթ. հեռուստաշոուների և ֆիլմերի արտադրություն. կենդանի զվարճությունների արտադրություն. զվարճանքի և ատրակցիոններով զբոսայգիների ծառայություններ. զվարճանքի և հանգստի թեմատիկ զբոսայգիների ծառայություններ. զվարճանքի և թեմատիկ զբոսայգիների ծառայություններ՝ հեռուստաշոուների և կինոֆիլմերի թեմայով. զվարճանքի և թեմատիկ զբոսայգիների գործարկում, կառավարում, կարգավորում և տնօրինում. խաղադահլիճների ծառայությունների տրամադրում. խաղադահլիճների համար մեքենաների վարձույթ. գրքերի, ամսագրերի և պարբերականների հրատարակում. առցանց ապահովում էլեկտրոնային հրապարակումներով. մրցույթների, մրցումների, խաղերի, վիկտորինաների, ցուցահանդեսների, միջոցառումների, շոուների, հյուրախաղային ներկայացումների, բեմականացված միջոցառումների, թատերական ներկայացումների, համերգների, կենդանի ներկայացումների ու հանդիսատեսի մասնակցությամբ միջոցառումների կազմակերպում, արտադրություն և ներկայացում. տաղանդի մրցույթների և երաժշտական ու հեռուստատեսային մրցանակաբաշխության միջոցառումների կազմակերպում. առցանց տեղեկատվական ծառայություններ համացանցի կամ հեռախոսների միջոցով տրամադրվող շարժական էլեկտրոնային խաղերի վերաբերյալ. ոչ ներբեռնելի թվային երաժշտության տրամադրում համացանցի կամ շարժական հեռախոսների համար. համակարգչային տվյալների հիմնապաշարից կամ համացանցի կամ շարժական հեռախոսների միջոցով տրամադրվող էլեկտրոնային խաղերի ծառայություններ. առցանց քվեարկության համակարգի տրամադրում համացանցի կամ կապի անլար սարքերի միջոցով՝ զվարճության նպատակով. նախապես գրառված DVD-ների, բարձր հստակության թվային սկավառակների և նախապես գրառված ձայնասկավառակների և սկավառակի վրա չգրառվող թվային տեղեկակիրների արտադրություն և տարածում. մուլտիպլիկացիոն ֆիլմերի արտադրություն. առցանց ոչ ներբեռնելի տեսահոլովակների և կինոֆիլմերից կամ հեռուստաշոուներից կամ դրանց վերաբերող ձայնա-, տեսատվյալների, գրաֆիկայի և(կամ) տեքստերի պարունակությամբ այլ մուլտիմեդիային թվային բովանդակության տրամադրում. ոչ ներբեռնելի կինոֆիլմերի, հեռուստաշոուների և մուլտֆիլմերի տրամադրում. տեղեկատվության տրամադրում հեռուստազվարճությունների, կինոֆիլմերի, խաղերի ու երաժշտության ոլորտում համակարգչային ցանցի և համաշխարհային հաղորդակցական ցանցի կամ շարժական հեռախոսների միջոցով. ոչ ներբեռնելի հեռուստաշոուների, կինոֆիլմերի, մուլտֆիլմերի և մուլտիմեդիային զվարճալի բովանդակության պարունակությամբ վեբ-կայքերի տրամադրում, ինչպես նաև հեռուստաշոուների, կինոֆիլմերի, մուլտֆիլմերի և մուլտիմեդիային զվարճալի բովանդակության վերաբերյալ տեղեկատվության տրամադրում. զվարճությունների ծառայություններ կենդանի ներկայացումների և դիմակավորված հերոսների մասնակցությամբ ներկայացումների տեսքով:

(740) Էդուարդ Նահապետյան

(210) 20181464 **(111) 29192**
(220) 24.09.2018 **(151) 22.07.2019**
(181) 24.09.2028
(730) Վոդաֆոն Գրուփ Փլք, GB
(442) 01.11.2018
(540)

VODAFONE

(511)

դաս 9. գիտական, ծովային, երկրաբաշխական, լուսանկարչական, կինեմատոգրաֆիական, օպտիկական, կշռման, չափման, ազդանշանման, հսկման (ստուգման), փրկության և ուսուցման սարքեր ու գործիքներ. էլեկտրականության հաղորդման, միացման, փոխակերպման, կուտակման, կարգավորման կամ վերահսկման սարքեր և գործիքներ. ձայնի կամ պատկերի գրառման, հաղորդման կամ վերարտադրման սարքեր. մագնիսական տեղեկակիրներ, ձայնագրման սկավառակներ. կոմպակտ սկավառակներ, DVD-ներ և տեղեկատվության այլ թվային կրիչներ. կանխավճարով աշխատող ապարատների մեխանիզմներ. դրամարկղային ապարատներ, հաշվիչ մեքենաներ, տվյալների մշակման սարքավորումներ, համակարգիչներ. համակարգչային ծրագրային ապահովում. հեռահաղորդակցական, հեռախոսային կամ կապի սարքեր և գործիքներ. ռադիոհեռախոսներ, շարժական և ֆիքսված կապի հեռախոսներ. բջջային հեռախոսներ. հեռահաղորդակցական դյուրատար սարքեր. սմարթֆոններ. հեռախոսների պատյաններ. ականջակալներ հեռախոսների համար. ձեռքի, շարժական և պլանշետային համակարգիչներ. կրովի էլեկտրոնային հեռահաղորդակցական և համակարգչային սարքեր. տվյալների հաղորդման սարքեր և գործիքներ. ձայնի մշակման համակարգեր. համակարգչային ցանցի և տյալների հաղորդման սարքավորումներ. տվյալների շարժական սարքեր. տվյալների շարժական փոխանցման սարքեր. տվյալների մշակման համակարգեր. տվյալների էլեկտրոնային հիմնապաշարներ. հեռախոսային թվային հարթակներ և ծրագրային ապահովում. համակարգչային ապարատային ապահովում հեռահաղորդակցության համար. հեռահաղորդակցական ցանցեր. մոդեմներ. ցանցային երթուղարարներ. լայնաշերտ տեղակայանքներ. ապակոդավորիչներ. հեռուստատեսային կցորդիչներ և կերպափոխիչներ, ներառյալ՝ ապարատներ, որոնք ունեն ինտերակտիվ դիտման ուղեցույց և (կամ) ձայնագրիչ՝ հեռուստատեսության և ձայնային ծրագրերի ձայնագրման համար. էլեկտրական և էլեկտրոնային սարքեր, որոնք օգտագործվում են արբանյակային, ցամաքային կամ մալուխային հեռարձակումների ընդունման համար. սարքեր և ապարատներ ծածկագրված տվյալների տեսքով տվյալների, տեքստերի, ձայնային տվյալների, գրաֆիկական պատկերների կամ տեսատվյալների կամ այդ ձևաչափերի համակցության մշակման, փոխանցման, պահպանման, գրանցման, ընդունման և առբերման համար. ձեռքի անլար սարքեր և սարքավորումներ. հեռակառավարման սարքեր էլեկտրական և էլեկտրոնային սարքերի համար. անձնական թվային օգնականներ. էլեկտրոնային սենսորներ, ներառյալ՝ քայլաչափեր, բարձրաչափեր և կշեռքներ. գծիկավոր կոդերն ու արագ արձագանքի կոդերն ընթերցող սարքեր և պատկերամուտներ. ձայնա- և տեսագրիչներ. տեղեկատվության, տվյալների, պատկերների և ձայնի պահման կրիչներ. համակարգչային տվյալների հիմնապաշարից, համացանցից կամ այլ էլեկտրոնային ցանցերից տրամադրվող թվային մեդիաբովանդակություն (ներբեռնվող), ներառյալ՝ ֆիլմեր, հեռուստատեսային ծրագրեր, ռադիոծրագրեր, տեսատվյալներ, պատկերներ, երաժշտություն, տեքստեր, տվյալներ, գրաֆիկական պատկերներ և հեռախոսազանգեր. արբանյակային ընդունող և հաղորդող սարքեր և գործիքներ, համակարգչային և տեսախաղեր, ներառյալ՝ ներբեռնվող խաղեր. համակարգչային տվյալների հիմնապաշարներից, համացանցից կամ այլ էլեկտրոնային ցանցից առցանց տրամադրվող էլեկտրոնային հրատարակություններ (ներբեռնվող). մեքենայական ընթերցող կրիչներ. համակարգչային տվյալների հիմնապաշարներից կամ համացանցից կամ այլ էլեկտրոնային ցանցից տրամադրվող

ներբեռնվող թվային ձայնային տվյալներ, տեսատվյալներ և տվյալներ. մարտկոցների լիցքավորիչներ՝ հեռահաղորդակցական սարքերի հետ օգտագործման համար. մարտկոցներ. մարտկոցների պահուստային էներգասնուցման աղբյուրներ. հեռուստացույցների և համակարգիչների ծայրամասային սարքավորումներ. համակարգիչներ, ներառյալ՝ անձնական դյուրակիր համակարգիչներ (լեփթոփներ) և դյուրակիր համակարգիչներ (նոթբուքեր). անձնական էլեկտրոնային օրգանայզերներ. էլեկտրոնային և արբանյակային նավագնացական և դիրքավորման սարքեր և գործիքներ, ներառյալ՝ գլոբալ դիրքավորման համակարգեր. սեղանին կամ ավտոմեքենայում տեղակայվող բարձրախոսներ ներառող սարքեր, որոնք թույլ է տալիս խոսափողի օգտագործումը բարձրախոսի միջոցով. ավտոմեքենաների համար նախատեսված հեռաոխոսների տակդիրներ. ստուգիչ-չափիչ սարքեր. չափման խելամիտ սարքեր. դատարկ և նախապես գրառված մագնիսական քարտեր. միկրոպրոցեսորներ պարունակող սարքեր. հեռախոսային քարտեր. վարկաքարտեր, հաշվեքարտեր և վճարային քարտեր. հեռախոսային վարկաքարտեր. ծածկագրով քարտեր. համակարգչային ծրագրային ապահովում, ներառյալ՝ համակարգչային տվյալների հիմնապաշարից, համացանցից կամ այլ էլեկտրոնային ցանցից տրամադրվող համակարգչային ծրագրային ապահովում. տվյալների հաղորդման ծրագրային ապահովում. կիրառական ծրագրային ապահովում, ներառյալ՝ ծրագրային ապահովում շարժական սարքերի համար. հավելվածներ համակարգչային ծրագրային ապահովման համար (ներբեռնելի). համակարգչային ծրագրային ապահովում տվյալների անլար հաղորդման համար. համակարգչային ծրագրային ապահովում և կիրառական ծրագրեր մեկ կամ մի քանի էլեկտրոնային սարքերի միջև ձայնի, տվյալների, օրացույցի և բովանդակության համաժամացման, փոխանցման կամ համատեղ օգտագործման համար, ձեռքի էլեկտրոնային սարքերի հավելվածների գնման և անվտանգության ապահովման համար, ծածկագրված գնման համար. օպերացիոն համակարգի ծրագրային ապահովում. համակարգչային ծրագրային ապահովում՝ հաղորդակցական ցանցերին և դրանց միջոցով ձայնա-, տեսատվյալների, գրաֆիկական պատկերների, տեքստի և տվյալների հոսքային հաղորդման, ծածկագրման և պահեստավորման համար. համակարգչային ծրագրային ապահովում, որն ընձեռում է հավասարազոր հանգույցներով ցանցերի ստեղծման և ֆայլերի համօգտագործման հնարավորություն. որոնողական համակարգերի ծրագրային ապահովում. համակարգչային ծրագրային ապահովում՝ էլեկտրոնային կապի ցանցերի միջոցով տվյալներով և ձայնային տվյալներով փոխանակվող համակարգչային օգտատերերի միջև հաղորդակցության իրականացման և համակարգման համար. ինտերակտիվ հեռուստատեսության ծրագրային ապահովում. պատկերների և տեսատվյալների խմբագրման ծրագրային ապահովում, ներառյալ՝ ծրագրային հավելվածներ շարժական հեռախոսների հետ օգտագործման համար. անձանց նույնականացման ծրագրային ապահովում. մուտքի հսկման, տեսահսկման և անձանց հայտնաբերման ծրագրային ապահովում. ծրագրային ապահովում համակարգչային անվտանգության ապահովման համար, այդ թվում՝ հակավիրուսային ծրագրեր, անվտանգության համակարգեր, հակասպամ ծրագրեր, հակալրտեսային ծրագրեր, ցանցային զտման ծրագրեր. ներխուժման հայտնաբերման ծրագրային ապահովում. վիրտուալ մասնավոր ցանցի ծրագրային ապահովում. համակարգչային ծրագրային ապահովում ֆիթնեսի, մարմնի ճարպի, մարմնի զանգվածի ցուցանիշի, քնի օրինաչափությունների, տեղադիրքերի, դիրքի, եղանակի և ջերմաստիճանի վերաբերյալ տեղեկությունների ստացման, մշակման, փոխանցման և ցուցադրման համար. համակարգչային ծրագրային ապահովում առողջապահական և ֆիթնես ծրագրերին հետևման, համապատասխանության և մոտիվացման վերաբերյալ տեղեկատվության կառավարման համար. հակահափշտակիչ հարմարանքներ, որոնք նախատեսված չեն տրանսպորտային միջոցների համար. հակաբախումային սենսորներ տրանսպորտային միջոցների համար. շարժական գույքի տեղադրման սարքեր և ապարատներ.

սարքեր շարժական գույքից տեղեկությունների ստացման և ուղարկման համար. սարքեր և սարքավորումներ էլեկտրական ապարատների և կենցաղային տեխնիկայի հեռակառավարման համար. ազդանշանային սարքեր և կայանքներ. տեղակայման և նավագնացական արբանյակային համակարգեր. համակարգեր համակարգչային ծրագրերն էլեկտրոնային սարքերի վրա և դրանցից ներբեռնելու և թարմացնելու համար. էլեկտրոնային և կենսաչափական սարքեր և կայանքներ մուտքի վերահսկման համար. սարքեր անձանց նույնականացման համար. տեսահսկման համակարգեր. խցիկներ, հեռուստատեսային խցիկներ և տեսագրման սարքեր տեսահսկման համակարգերի համար. օպտիկական և լուսանկարչական ապարատներ. էլեկտրոնային արագաչափներ. էլեկտրոնային քայլաչափներ. էլեկտրոնային պտուտաչափներ. տրանսպորտային միջոցների արագության ստուգիչ սարքեր. կիլոմետրերի գրանցման սարքեր տրանսպորտային միջոցների համար. էլեկտրական կամ էլեկտրոնային սենսորներ տրանսպորտային միջոցների համար. էլեկտրոնային սենսորներ. շչակներ. էլեկտրական փականներ տրանսպորտային միջոցների համար. հեռակառավարման ապարատներ. էլեկտրոնային բանալիներ տրանսպորտային միջոցների համար. էլեկտրոնային համակարգեր տրանսպորտային միջոցներն առանց բանալիի բացման և գործի դրման համար. համակարգեր ավտոմեքենաների դռների, բեռնախցիկի, կապոտի և տանիքի ավտոմատ բացման և փակման համար. մոտոցիկլի սաղավարտների մեջ տեղադրվող կապի սարքեր. գլոբալ դիրքավորման համակարգերի (GPS) սարքեր. տրանսպորտային միջոցների համար սարքեր տրանսպորտային միջոցի գտնվելու վայրը, տեղամասի դիրքը, ճանապարհային երթուղիները, ժամը, երթևեկության իրավիճակը, վթարային տրանսպորտային միջոցների առկայությունը և վտանգավոր իրավիճակը որոշելու կամ ցուցադրելու համար. տրանսպորտային միջոցների և ճանապարհային ենթակառուցվածքների միջև հաղորդակցման համակարգեր. ճանապարհային գծանշումների հայտնաբերման սարքեր. տրանսպորտային միջոցների հեռաուղղորդման համակարգեր և գործիքներ. «մեռած» գոտիների ու երթևեկության շարքի փոփոխման վերահսկման օժանդակ համակարգեր. տրանսպորտային միջոցների մեջ ներկառուցվող համակարգիչներ. տրանսպորտային միջոցներում, այդ թվում՝ վերգետնյա տրանսպորտային միջոցներում ներկառուցվող էլեկտրական, էլեկտրոնային կամ օպտիկական սարքավորումներ. ներկառուցվող ախտորոշիչ համակարգեր և հեռակառավարմամբ ախտորոշիչ համակարգեր տրանսպորտային միջոցների համար. համակարգեր համակարգչային ծրագրերը տրանսպորտային միջոցներից և դրանց մեջ բեռնման և թարմացման համար. անվտանգության նպատակներով տրանսպորտային միջոցների և հեռադիր կայանքի միջև տվյալների հայտնաբերման և տվյալների փոխանակման սարքեր. ավտոկայանատեղերի ցուցիչներ, խոչընդոտների հայտնաբերման սարքեր. ավտոկայանման օժանդակման, հետընթացքի և վարորդի տեսադաշտից դուրս օբյեկտի հայտնաբերման համակարգեր և ազդասարքեր. հնարավոր բախումների կանխարգելման և բախումից խուսափման համակարգեր. էլեկտրոնային անշարժացնող սարքեր տրանսպորտային միջոցների համար. տրանսպորտային միջոցների համար սենսորային էկրանով համակարգչային համակարգեր. տրանսպորտային միջոցների հեռավոր տեղակայման սարքեր. ժամացույցի փոկեր սմարթֆոններին տվյալների փոխանցման համար. ներբեռնվող ծրագրային ապահովում գովազդային և ցուցադրական նպատակների համար, հեռահաղորդակցական սարքերի անհատական էկրանների համար. սիմ քարտեր. հեռակապման սարքեր. հեռակապման ծրագրային ապահովում. խաղային կառավարման վահանակներ. զգայուն սենսորներ, սարքավորումներ և ապարատներ. ծրագրային ապահովում զգայուն սենսորների, սարքավորումների և ապարատների հետ օգտագործման համար. վիրտուալ իրականության ծրագրային և ապարատային ապահովում. վիրտուալ իրականության ընդլայնված ծրագրային և ապարատային ապահովում. համակարգչային ապարատային ապահովման մոդուլներ իրերի համացանցի հետ օգտագործման համար.

համակարգչային ապարատային ապահովման մոդուլներ իրերի համացանցով էլեկտրոնային սարքերի համար. ծրագրային ապահովում իրերի համացանցի գործարկման ընթացքում օգտագործման համար. կիրառական ծրագրեր, ներառյալ՝ կիրառական ծրագրեր շարժական սարքերի համար. ներբեռնելի համակարգչային ծրագրային հավելվածներ. կապի ծրագրային ապահովում. համակարգչային ծրագրային ապահովում և կիրառական ծրագրեր անվտանգության, ծածկագրված գնումների համար. ծրագրային ապահովում համակարգչային անվտանգության համար, ներառյալ՝ հակավիրուսային ծրագրեր, անվտանգության համակարգեր, հակասպամ ծրագրեր, հակալրտեսային ծրագրեր, ցանցային զտման ծրագրեր և չարտոնված մուտքի հայտնաբերման ծրագրեր. համակարգեր համակարգչային ծրագրերն էլեկտրոնային սարքերի վրա և դրանցից ներբեռնելու և թարմացնելու համար. հաճախորդների աջակցման և հաճախորդների սպասարկման համակարգչային ծրագրային ապահովում և կիրառական ծրագրեր. ձայնային հրահանգի և ճանաչման ծրագրային ապահովում, խոսքը տեքստի փոխակերպման ծրագրային ապահովում և ձայնով ակտիվացվող ծրագրային հավելվածներ. հաղորդագրությունների փոխանակման ծրագրային ապահովում. անձնական օգնական ծրագրային ապահովում. համակարգչային ծրագրային ապահովում անձնական տեղեկատվության կառավարման համար. համակարգչային ծրագրային ապահովում, որն օգտագործվում է իրերի համացանցի էլեկտրոնային սարքերի միացման և վերահսկման համար. ռոբոտ-զրուցակիցների համակարգչային ծրագրային ապահովում և կիրառական ծրագրեր. համակարգչային ծրագրային ապահովում և կիրառական ծրագրեր արհեստական բանականության (AI) ոլորտում. արհեստական բանականությամբ ռոբոտ-զրուցակիցների համակարգչային ծրագրային ապահովում և կիրառական ծրագրեր հաճախորդների աջակցման և սպասարկման համար. հաճախորդների սպասարկման ռոբոտ-զրուցակիցների ծրագրային ապահովում. արհեստական բանականությամբ մարդանման ռոբոտներ. արհեստական բանականությամբ սարքեր. էլեկտրոնային հսկիչ սարքեր. էլեկտրոնային հսկիչ սարքեր սենսորային հետադարձ կապի, այն է՝ օգտատերերի կողմից զգացվող ձայնի և թրթիռների ապահովման համար. ինտերակտիվ տեսախաղերի շարժազգայուն հեռակառավարման սարքեր. ինտերակտիվ տեսախաղերի հեռակառավարման սարքեր. համակարգչային ծրագրային ապահովում ձայնի և տվյալների փոխանցման համար. համակարգչային ծրագրային ապահովում և ծայրամասային սարքեր անհատական ինտերակտիվ հեռուստատեսային ծրագրերի կազմման համար և տեսամեդիայի, գրաֆիկական պատկերների, տեքստի, լուսանկարների, պատկերազարդումների, թվային անիմացիաների, տեսահոլովակների, կինոկադրերի և ձայնային տվյալների ցուցադրման և ձեռքով կառավարման համար, ինչպես նաև սոցիալական ցանցերի ստեղծման համար. անլար հսկիչ սարքեր այլ էլեկտրոնային սարքերի գործունեության հետևման և վերահսկման համար. սենսորային էկրաններ. ծնողական վերահսկման ծրագրային ապահովում. ցանցային սարքավորանք. էլեկտրոնային առևտրի ծրագրային ապահովում. ժամացույցներ, որոնք տվյալները փոխանցում են սմարթֆոնների վրա. տրանսպորտային միջոցների հեռավոր տեղակայման սարքեր. սմարթ ժամացույցներ.

դաս 38. հեռահաղորդակցություն. շարժական և ֆիքսված հեռահաղորդակցություն և հեռախոսություն, արբանյակային հեռահաղորդակցություն, բջջային հեռահաղորդակցություն, ռադիո և բջջային հեռախոսություն, ռադիոֆաքսիմիլային, ռադիոփեյջինգային և ռադիոհաղորդակցական ծառայություններ. ձայնի փոխանցման ծառայություններ. ձայնային հաղորդագրությունների և ձայնային փոստի ծառայություններ. տվյալների և ձայնի փոխանցման էլեկտրոնային փոստի ծառայություններ. հեռահաղորդակցական, ռադիո, ռադիոհեռախոսության և ռադիոֆաքսիմիլային սարքերի վարձույթ, վարձում և վարձակալություն. հեռահաղորդակցական միջոցների վարձույթ. հեռախոսային սխեմաների վարձակալում. տվյալների փոխանցում

ռադիո, հեռահաղորդակցական և արբանյակային կապի միջոցով. ռադիոհաղորդում և ընդունում. արբանյակային կապի, հեռուստատեսային կապի և (կամ) ռադիոկապի ծառայություններ. ձայնի հաղորդման և ընդունման կապի ծառայություններ. ձայնի փոխանցում համացանցի կանխագրերի միջոցով. հեռահաղորդակցական կապի ծառայություններ գլոբալ համակարգչային ցանցի կամ համացանցի միջոցով. հեռախոսային և շարժական հեռախոսային հաղորդագրությունների հավաքում և փոխանցում. ձայնային տվյալների և պատկերների տեղհասցնում և ընդունում. ինքնապատասխանիչի ծառայություններ երրորդ անձանց համար. հեռախոսային ավտոմատների ինքնապատասխանիչի ծառայություններ. անհատական համարների տրամադրման ծառայություններ. հեռահաղորդակցական սարքերի փոխառություն վնասվածքի, կորստի կամ հափշտակման դեպքում. համացանցային ծառայությունների տրամադրում, այն է՝ համացանց մուտքի տրամադրում. ինտերնետ պրովայդերների ծառայություններ. տեղեկատվության (ներառյալ՝ վեբ էջերի), համակարգչային ծրագրերի և այլ տվյալների հեռահաղորդակցություն. էլեկտրոնային փոստի ծառայություններ. լայնաշերտ տեսածառայությունների տրամադրում. անլար կապի ծառայություններ. անլար հեռախոսակապ. թվային ցանցի հեռահաղորդակցական ծառայություններ. պորտալի ծառայություններ. հեռախոսային տեղեկատուների ծառայություններ. գեոլոկացիոն հեռահաղորդակցական ծառայությունների տրամադրում հեռահաղորդակցական սարքերի համար. անլար կիրառական կանխագրերի ծառայությունների տրամադրում, ներառյալ՝ անվտանգ կապի ալիքի օգտագործմամբ ծառայություններ. հեռախոսային և հեռահաղորդակցական սարքերի ու սարքավորումների վերաբերյալ կամ դրանք նույնականացնող տեղեկատվության տրամադրում. հեռահաղորդակցական միացումների և երթուղավորման ծառայություններ. տվյալների միջփոխանակման ծառայություններ. տվյալների փոխանցում հեռահաղորդակցության միջոցով. տվյալների հոսքային փոխանցում. թվային մեդիաբովանդակության, ներառյալ՝ ֆիլմերի, հեռուստատեսային ծրագրերի, ռադիոհաղորդումների, տեսատվյալների, երաժշտության, տեքստի, տվյալների, պատկերների, գրաֆիկական պատկերների և հեռախոսազանգերի հոսքային փոխանցում համացանցի կամ հեռահաղորդակցական ցանցի միջոցով. թվային մեդիաբովանդակության, ներառյալ՝ ֆիլմերի, հեռուստատեսային ծրագրերի, ռադիոհաղորդումների, տեսատվյալների, երաժշտության, տեքստի, տվյալների, պատկերների, գրաֆիկական պատկերների և հեռախոսազանգերի տեղհասցնում համացանցի կամ հեռահաղորդակցական ցանցի միջոցով. տվյալների փոխանցման ծառայություններ. հեռարձակման ծառայություններ. տվյալների հեռարձակման ծառայություններ. ռադիո կամ հեռուստատեսային ծրագրերի հեռարձակում կամ հաղորդում. թվային ձայնա-, տեսա- և մուլտիմեդիա բովանդակության փոխանցում հեռահաղորդակցության միջոցով. ձայնա- և տեսաֆայլերի փոխանցում համակարգչային և այլ էլեկտրոնային հաղորդակցական ցանցի միջոցով. նորությունների և ընթացիկ իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանցում. թվային երաժշտության տեղհասցնում հեռահաղորդակցության միջոցով. սոցիալական ցանցերի վեբ կայքերին մուտքի տրամադրում. տեսատեքստի ծառայություններ, տեսատեքստի (ինտերակտիվ տեսագրաֆիայի) ծառայություններ, տելետեքսի (ցանցով տեքստային հաղորդագրությունների փոխանցման) ծառայություններ, տելեքսի, տեսակապի և ինտերակտիվ տեսատեքստի ծառայություններ. հաղորդագրությունների փոխանցման ծառայություններ, այն է՝ հաղորդագրությունների ուղարկում, ընդունում և վերահասցեագրում տեքստի, ձայնային տվյալների, գրաֆիկական պատկերների կամ տեսատվյալների կամ այդ ֆորմատների համակցության տեսքով. հաղորդագրությունների համակցված փոխանցման ծառայություններ. ձայնային փոստի ծառայություններ. տվյալների ցանցի ծառայությունների տրամադրում. տեսակոնֆերանսների ծառայություններ.

տեսահեռախոսային ծառայություններ. համացանցին կամ տվյալների հիմնապաշարներին հեռահաղորդակցական կապի տրամադրում. հաղորդագրությունների, տվյալների և պատկերների համակարգչայնացված փոխանցում. համակարգչային կապի ծառայություններ. էլեկտրոնային կոնֆերանսների տրամադրում և անցկացում. համակարգչային տվյալների հիմնապաշարներին, համակարգչային հայտարարությունների տախտակներին, համակարգչային ցանցերին, ինտերակտիվ համակարգչային կապի ցանցերին, տարբեր ոլորտներում էլեկտրոնային հրատարակություններին, վաճառքի ու սպասարկման կատալոգներին ու տեղեկատվությանը և համակարգչայնացված հետազոտական ու տեղեկատվական նյութերին մուտքի ժամանակի տրամադրում և վարձակալում. ուսուցողական բովանդակությանը, վեբ կայքերին և պորտալներին մուտքի տրամադրում. կապի ծառայություններ էլեկտրոնային սարքերի հեռակառավարման համար. կապի ցանցերի ծառայություններ խելամիտ չափման համակարգերի համար. կապի ծառայություններ շտապ հաղորդագրությունների և ահազանգերի տեղհասցնման համար. տվյալների և փաստաթղթերի էլեկտրոնային փոխանցում համակարգչային տերմինալների և էլեկտրոնային սարքերի միջոցով. էլեկտրոնային առևտրի նպատակով ազդանշանի փոխանցում՝ հեռահաղորդակցական համակարգերի և տվյալների կապի համակարգերի միջոցով. էլեկտրոնային կապի ցանցեր և էլեկտրոնային տվյալների հիմնապաշարներ մուտքի տրամադրում. հաղորդակցական միջոցների տրամադրում թվային տվյալների միջփոխանակման համար. տվյալների հաղորդում հեռահաղորդակցական կապի միջոցներով. տվյալների փոխանցում, այդ թվում՝ ձայնատեսային սարքերի միջոցով. ձայնային, պատկերային, տեսողական և տվյալների ազդանշանների փոխանցում. տվյալների հիմնապաշարներ մուտքի տրամադրում. տվյալների բանկի փոխկապակցման ծառայություններ. էլեկտրոնային տվյալների փոխանակման ծառայություններ. էլեկտրոնային փոստի տվյալների ծառայություններ. տվյալների հեռարձակում և կապի ծառայություններ. երրորդ կողմի օգտատերերին հեռահաղորդակցական ենթակառուցվածքներ մուտքի տրամադրում. տեղեկատվության տրամադրում հեռահաղորդակցության վերաբերյալ, էլեկտրոնային հեռահաղորդակցական կապի տրամադրում. հեռահաղորդակցական ուղեմուտների ծառայություններ. ինտերակտիվ հեռահաղորդակցական ծառայություններ. հեռահաղորդակցական ցանցի ծառայություններ. խորհրդակցական ծառայություններ հեռահաղորդակցության ոլորտում. հեռահաղորդակցական ծառայություններ օդանավերի ուղևորների համար. էլեկտրոնային վճարման ծառայություններին, այդ թվում՝ դրամային միջոցների էլեկտրոնային փոխանցումների ծառայություններին և գործարքների առցանց միջոցներին մուտքի տրամադրում. հեռահաղորդակցական կապի և ցանցերի տրամադրում իրերի համացանցի հետ օգտագործման համար. համացանցում էլեկտրոնային առևտրի հարթակներ մուտքի տրամադրում:

(740) Ալեքսանդր Նահապետյան

---

(210) 20181468 **(111) 29193**
(220) 25.09.2018 **(151) 22.07.2019**
(181) 25.09.2028

(730) Ֆիլիփ Մորիս Փրոդաքթս Ս.Ա., CH

(442) 01.10.2018

(310) 32829 (320) 16.05.2018 (330) AD

(540)

HEETS PURPLE WAVE

(511)

դաս 34. լարով գոլորշիարարներ էլեկտրոնային սիգարետների և ծխելու էլեկտրոնային սարքերի համար. չմշակված կամ մշակված ծխախոտ. ծխախոտային արտադրանք, ներառյալ՝ սիգարներ, սիգարետներ, սիգարիլներ, ծխախոտ սեփական սիգարետները փաթաթելու համար, ծխախոտ ծխամորճով ծխելու համար, ծամելու ծխախոտ,

հոտ քաշելու ծխախոտ, կրետեկ. սնուս. ծխախոտի փոխարինիչներ (ոչ բժշկական նպատակներով օգտագործելու համար). ծխելու պիտույքներ, ներառյալ՝ սիգարետի թուղթ և ծխափողեր, սիգարետի զտիչներ, մետաղական տուփեր ծխախոտի համար, սիգարետի արկղեր և մոխրամաններ, ծխամորճեր, գրպանի հարմարանքներ սիգարետները փաթաթելու համար, վառիչներ ծխողների համար. լուցկի. ծխախոտային փայտիկներ, տաքացվող ծխախոտային արտադրանք, սիգարետները կամ ծխախոտը տաքացնող էլեկտրոնային սարքեր և դրանց մասեր՝ տաքացման ընթացքում նիկոտին պարունակող աերոզոլի արտազատման համար. նիկոտին պարունակող հեղուկ էլեկտրոնային սիգարետների համար. ծխելու էլեկտրոնային սարքեր. էլեկտրոնային սիգարետներ. ավանդական սիգարետներին փոխարինող էլեկտրոնային սիգարետներ. էլեկտրոնային սարքեր նիկոտին պարունակող աերոզոլի ներշնչման համար. ծխողների համար բերանի ցողացիրներ. ծխելու պիտույքներ էլեկտրոնային սիգարետների համար, բոլոր վերը նշված ապրանքների համար մասեր և կցամասեր ներառված 34-րդ դասում. սարքեր տաքացված սիգարետների, սիգարների, ինչպես նաև տաքացված ծխախոտային փայտիկների մարման համար. էլեկտրոնային վերալիցքավորվող սիգարետների պատյաններ:

(740) Էդուարդ Նահապետյան

---

(210) 20181653 **(111) 29194**
(220) 23.10.2018 **(151) 22.07.2019**
(181) 23.10.2028

(730) Անհատ ձեռնարկատեր Լուսինե Մելքոնյան, Երևան, Նազարբեկյան թաղ., շ. 8, բն. 17, ԱՄ

(442) 01.11.2018

(540)



(526) «TRAVEL ARMENIA» արտահայտությունն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է կարմիր և սպիտակ գունային համակցությամբ:

(511)

դաս 39. ճանապարհորդությունների ամրագրում.

դաս 43. տեղերի ամրագրմամբ (հյուրանոցներում, պանսիոններում) զբաղվող գործակալություններ. տեղերի ամրագրում հյուրանոցներում:

---

(210) 20181655 **(111) 29195**
(220) 23.10.2018 **(151) 22.07.2019**
(181) 23.10.2028

(730) Անի Եղիկյան, ք. Գյումրի, Տրդատ Ճարտարապետ 32, բն. 6, ԱՄ

(442) 03.12.2018

(540)



(526) «design matters» արտահայտությունն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է սև, մանուշակագույն և վարդագույն գունային համակցությամբ:

(511)

դաս 18. տուրիստական պայուսակներ. ճամփորդական սնդուկներ. ուղեպայուսակներ. դրամապանակներ. ճամպրուկներ. ճամփորդական սնդուկներ (ուղեբեռի). պայուսակներ ալպինիստների համար. դպրոցական պայուսակներ. կոնապայուսակներ. տափակ ճամպրուկներ փաստաթղթերի համար. տափակ ճամպրուկներ. սպորտային պայուսակներ. պայուսակներ. անվավոր ճամպրուկներ. ուղեբեռի տեսակավորման համար հարմարեցվող պայուսակներ:

---

(210) 20181748 **(111) 29196**
(220) 06.11.2018 **(151) 22.07.2019**
(181) 06.11.2028

(730) «ՋիէՆ» ՍՊԸ, Երևան, Հանրապետության 37, ԱՄ
(442) 16.11.2018
(540)



(526) «ALL WHITE PORTION» և «ALL WHITE» գրառումներն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:
(591) Ապրանքային նշանը պահպանվում է վարդագույն, սպիտակ, սև, մուգ կապույտ և կանաչափիրուզագույն գունային համակցությամբ:
(511)
դաս 34. ծամելու ծխախոտ «սնուս»:

---

(210) 20181756
(111) 29197
(220) 07.11.2018
(151) 22.07.2019
(181) 07.11.2028
(730) Րիջընթ Հոսփիթալիթի Ուորլդուայդ, Ինք., KY
(442) 16.01.2019
(540)

REGENT

(511)
դաս 35. հյուրանոցային գործունեության կառավարում երրորդ անձանց համար. ֆրանշիզային ծառայություններ հյուրանոցների ոլորտում. գործարար խորհրդատվություն և խորհրդատվական ծառայություններ հյուրանոցների կառավարման, գործարկման և ֆրանչայզինգի ոլորտում. հյուրանոցների և այլ կացարանների գործունեության կառավարում. հյուրանոցների և անշարժ գույքի ոլորտում մարքեթինգային (շուկայավարման) ծառայություններ. սպառողների հավատարմության և խրախուսական ծրագրերի կառավարում ու իրականացում. խրախուսական, գովազդային ծառայություններ սպառողների հավատարմության և խրախուսական ծրագրերի իրականացման տեսքով.
դաս 36. անշարժ գույքի հետ կապված ծառայություններ, այն է՝ բնակարանների, համատիրությունների, որոշակի ժամանակով օգտագործման իրավունքով գույքի, բնակելի տարածքների սեփականության, հանգստյան և ժամանցային տարածքների սեփականության, ինչպես նաև դրանց հետ կապված հարմարությունների և կոմունալ հարմարությունների զարգացման, լիզինգի, կառավարման, վարձակալության և միջնորդական ծառայություններ. որոշակի ժամանակով օգտագործման իրավունքով անշարժ գույքի փոխանակման ծառայություններ.
դաս 43. հյուրանոցների, կացարանների և ժամանակավոր բնակատեղերի ապահովման ծառայություններ. հյուրանոցների, կացարանների և ժամանակավոր բնակատեղերի վերաբերյալ տեղեկատվական ծառայություններ. հյուրանոցների, կացարանների և ժամանակավոր բնակատեղերի ամրագրման ծառայություններ. ռեստորանների, բարերի, կոկտեյլ բարերի, սրճարանների, փոքր և մատչելի սրճարանների, սրճարան-ռեստորանների, խորտկարանների ծառայություններ. սննդամթերքի պատրաստում, առաքում, մատուցում և սեղանի ձևավորում (քեյթրինգ). ռեստորանների ամրագրման ծառայություններ. կոնֆերանսների, հանդիպումների, իրադարձությունների, նիստերի, համագումարների և ցուցահանդեսների համար նախատեսված համընդհանուր միջոցների և հարմարությունների տրամադրում. կահույքի, սեղանի սպիտակեղենի և ամանեղենի վարձույթ:
(740) Անգելինա Նահապետյան

---

(210) 20181828 **(111) 29198**
(220) 19.11.2018 **(151) 22.07.2019**
(181) 19.11.2028

(730) Արամ Սանոսյան, Երևան, Ա. Մանուկյան 12, AM

(442) 01.02.2019

(540)

HANQAVAN PALACE & SPA

(526) «PALACE & SPA» արտահայտությունն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(511)

դաս 43. հյուրանոցների ծառայություններ.

դաս 44. թերապևտիկ ծառայություններ. հանքաջրաբուժական կենտրոնների ծառայություններ. արևաբուժարանների ծառայություններ. ծառայություններ արոմաթերապիայի ոլորտում. առողջատների ծառայություններ. ֆիզիոթերապիա. մերսում:

---

(210) 20181829 **(111) 29199**
(220) 19.11.2018 **(151) 22.07.2019**
(181) 19.11.2028

(730) Արամ Սանոսյան, Երևան, Ա. Մանուկյան 12, AM

(442) 01.02.2019

(540)

HANQAVAN PALACE

(526) «PALACE» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(511)

դաս 41. զգեստավորված դիմակահանդեսների կազմակերպում զվարճությունների համար. գիշերային ակումբ-սրճարանների ծառայություններ (զվարճություններ). կարաոկե ծառայություններ. պարահանդեսների կազմակերպում. դիսկոտեկների ծառայություններ. ակումբների ծառայություններ (զվարճություն կամ կրթություն). ֆիթնես-դասերի անցկացում. հանգստի օբյեկտների տրամադրում. զվարճությունների կազմակերպում հյուրերի համար.

դաս 43. սննդամթերքի պատրաստում, առաքում, մատուցում և սեղանի ձևավորում (քեյթրինգ). սրճարանների ծառայություններ. նախաճաշարանների ծառայություններ. ռեստորանների ծառայություններ. ինքնասպասարկման ռեստորանների ծառայություններ. խորտկարանների ծառայություններ. բարերի ծառայություններ. սենյակների, դահլիճների վարձակալում հավաքների համար. մթերքից խոհարարական արձանիկների ստեղծում. վաշոկու ռեստորանների ծառայություններ. «ուդոն» և «սոբա» ռեստորանների ծառայություններ. մոթելների ծառայություններ. տեղերի ամրագրում ժամանակավոր բնակության համար. հյուրանոցների ծառայություններ.

դաս 44. պալիատիվ խնամք. սահմանափակ հնարավորություններով անձանց համար բժշկական խորհրդատվություն. օրթոդոնտական ծառայություններ (օրթոդոնտիա). խորհուրդներ առողջության հարցերով. լոգոպեդիա. ոչ ավանդական բժշկության ոլորտում ծառայություններ. դիսպանսերներ. բուժկենտրոններ.թերապևտիկ ծառայություններ. դեղագործների կողմից դեղերի պատրաստում դեղատոմսերով. վիզաժիստների ծառայություններ. հանքաջրաբուժական կենտրոնների ծառայություններ. Արևաբուժարանների ծառայություններ. շոգեբաղնիքների ծառայություններ. հեռաբուժման ծառայություններ. դաջում. բուժում հոմեոպաթիկ բնահյութերով, ծառայություններ արոմաթերապիայի ոլորտում. հոգեբանների ծառայություններ. մազերի պատվաստում. խորհրդատվություն դեղագործության հարցերով. հիվանդների խնամք. մատնահարդարում. հոսպիսներ. ատամնաբուժական օգնություն, ստոմատոլոգիա. առողջատների ծառայություններ. ֆիզիոթերապիա. բժշկական օգնություն. մերսում. սանիտարական ծառայություն. հիվանդանոցների ծառայություններ. վարսավիրանոցների ծառայություններ. մանուալ թերապիա (քիրոպրակտիկա). բժշկական կլինիկաների ծառայություններ. գեղեցկության սրահների ծառայություններ. թուրքական բաղնիքների ծառայություններ:

---

(210) 20181858 **(111) 29200**
(220) 23.11.2018 **(151) 22.07.2019**
(181) 23.11.2028

(730) «Ջիէն» ՍՊԸ, Երևան, Հանրապետության 37, ՀՀ
(442) 17.12.2018
(540)

GN Sirius

(511)

դաս 5. ծխախոտ չպարունակող սիգարետներ բժշկական նպատակների համար. ծխելու խոտեր բժշկական նպատակների համար. նիկոտինային ծամոն (խեժ) ծխելուց հրաժարվելու համար. նիկոտինային սպեղանալաթ ծխելուց հրաժարվելու համար.

դաս 34. լուցկիներ. սիգարների և սիգարետների համար մուշտուկների սաթե ծայրապանակներ. ծխախոտ. ծխախոտի քսակներ. ծխագլանակի պարկուճներ առանց ծխախոտի մասերի. ֆիլտրեր սիգարետների համար. վառիչներ ծխողների համար. գազի բալոններ վառիչների համար. ծխամորճեր. ծխախոտաթղթերի գրքույկներ. կլանող թուղթ ծխամորճերի համար. ծամելու ծխախոտ. սիգարներ. սիգարակտրիչ մեքենաներ. արկղեր սիգարների համար. արկղեր սիգարետների, ծխագլանակների համար. մուշտուկներ սիգարների համար. ծխախոտի փոխարինիչներ պարունակող սիգարետներ, ոչ բուժական նպատակների համար. սիգարետներ, ծխագլանակներ. գրպանի հարմարանքներ սիգարետները, ծխախոտերը փաթաթելու համար. մուշտուկներ սիգարետների համար. սիգարետի մուշտուկների ծայրապանակներ. սիգարետների պապիրոսաթուղթ. սիգարիլներ. ծխամորճերը մաքրելու հարմարանքներ. կայծքարեր. ծխելու խոտաբույսեր. դրոցներ ծխամորճերի համար. լուցկիների բռնիչներ. անոթներ ծխախոտի համար. քթախոտ. ծխախոտատուփեր. լուցկու տուփեր. մոխրամաններ. թքամաններ ծխախոտի համար. խոնավարարներով տուփեր սիգարների համար. էլեկտրոնային սիգարետներ. հեղուկ լուծույթներ էլեկտրոնային սիգարետների համար. ծխողների համար բերանի ցողացիրներ. ծխախոտի բուրավետարարներ, բացի եթերային յուղերից. էլեկտրոնային սիգարետների բուրավետարարներ, բացի եթերային յուղերից:

---

(210) 20181912 **(111) 29201**
(220) 30.11.2018 **(151) 22.07.2019**
(181) 30.11.2028

(730) «Վայնփարք Արմենիա» ՍՊԸ, Արմավիրի մարզ, գ. Նորակերտ, փ. 4, տուն 7, ՀՀ
(442) 28.12.2018
(540)



(526) «varde» և «ARMENIA» գրառումներն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:
(591) Ապրանքային նշանը պահպանվում է սև և վարդագույն գունային համակցությամբ:
(511)

դաս 33. ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի), մասնավորապես՝ գինիներ:

---

(210) 20181913 **(111) 29202**
(220) 30.11.2018 **(151) 22.07.2019**
(181) 30.11.2028

(730) «Վայնփարք Արմենիա» ՍՊԸ, Արմավիրի մարզ, գ. Նորակերտ, փ. 4, տուն 7, ՀՀ
(442) 28.12.2018
(540)



(526) «ARMENIA» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:
(591) Ապրանքային նշանը պահպանվում է սև և մանուշակագույն գունային համակցությամբ:
(511)
դաս 33. ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի), մասնավորապես՝ գինիներ:

---

(210) 20181914 **(111) 29203**
(220) 30.11.2018 **(151) 22.07.2019**
(181) 30.11.2028
(730) «Վայնփարք Արմենիա» ՍՊԸ, Արմավիրի մարզ, գ. Նորակերտ, փ. 4, տուն 7, ԱՄ
(442) 28.12.2018
(540)



(526) «ARMENIA» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:
(511)
դաս 33. ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի), մասնավորապես՝ գինիներ:

---

(210) 20182087 **(111) 29204**
(220) 21.12.2018 **(151) 22.07.2019**
(181) 21.12.2028
(730) «Հայր և որդի Երեմյաններ» ՍՊԸ, Երևան, Եր. Քոչարի 27/25, ԱՄ
(442) 16.01.2019
(540)



(511)
